ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«09» մարտի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Ֆոտոն ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Մերկադո ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. **Ֆոտոն ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) «4.3. Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնի «4.3.3. Վարչատարածքային միավորը», ինչպես նաև «4.4. Անձի բնակության հասցեն» ենթաբաժնի «4.4.3. Վարչատարածքային միավորը» դաշտերը լրացված չեն.

- 4-րդ, 5-րդ, 6-րդ, 13-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2. **Մեգաօֆիս ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական: Դիմում-հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը լրացված է, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության համաձայն՝ այն ենթակա չէ լրացման.

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված N 1.2) «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին» դաշտում տարին սխալ է լրացված:

Հայտում առկա ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎ՝ Հավելված N 1.3-ը ավելորդ է և գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել.

- 11-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3. **Մերկադո ՍՊԸ**

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում լրացված թվանշանների քանակը գերազանցում է ՀՀ Կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ անձնագրերի համարակալման համար նախատեսված թվանշանների քանակին.

- 12-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մարտի 11-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել համապատասխան մասնակիցների՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մարտի 10-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝ _____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան